Հավելված N 1
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի պետական ինստիտուտ,,
հիմնադրամի ռեկտորի
հունիսի 2017թվականի N 127 հրամանի

,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ,, ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. ,,Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ,, հիմնադրամի (այսուհետ՝ ինստիտուտ) պրոֆեսորադասախոսական կազմի (այսուհետ՝ ՊԴԿ) վերապատրաստման ընթացակարգի ընդունման նպատակը ՊԴԿ վերապատրաստումների ընթացակարգի սահմանումն ու համակարգային ներկայացումն է:

2.ՊԴԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 ՊԴԿ վերապատրաստումների իրականացման նպատակը կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան ՊԴԿ որակավորման բարձրացումն ու նրանց մասնագիտական ներուժի մեծացումն է:

2.2 ՊԴԿ վերապատրաստումների իրականացման խնդիրներն են.

1) տարեկան գնահատման արդյունքների հիման վրա մասնագիտական գնահատման կարիքների վերհանում,
2) ՊԴԿ մասնագիտական զարգացման լավագույն փորձի ուսումնասիրությունը և ներդրումը վերապատրաստման ծրագրերում,
3) ՊԴԿ վերապատրաստման ծրագրի մշակումը՝ ըստ կրթական ծրագրերի պահանջների,
4) Վերապատրաստման դասընթացների մշակումը, արդյունքների գնահատումը և բարելավումը:

2.3 Վերապատրաստումները կազմակերպվում և իրականացվում են ինստիտուտի կողմից՝ վերջինիս ֆինանսական միջոցների հաշվին: Մասնագիտական վերապատրաստումներին մասնակցած ՊԴԿ ներկայացուցիչները պարտավոր են առնվազն երկու տարի շարունակել աշխատել ինստիտուտում, հակառակ դեպքում՝ վերադարձնել վերապատրաստման համար ինստիտուտի կողմից ծախսված դրամական միջոցները:

2.4 Մասնագիտական վերապատրաստումներին մասնակցած ՊԴԿ ներկայացուցիչները պարտավոր են իրենց ստացած գիտելիքները և հմտությունները կիսել իրենց գործընկերների հետ՝ իրականացնելով ներքին վերապատրաստումներ առնվազն 10 աշխատակիցների համար:

3.ՊԴԿ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

3.1 ՊԴԿ վերապատրաստումների իրականացվում են հաշվի առնելով հետևյալ հիմնարար սկզբունքները՝

- Նպատակայնություն: Բոլոր վերապատրաստումները պետք է իրականացվեն այն թեմաների շուրջ և բարելավեն այն հմտությունները, որոնք պրոֆեսորադասախոսական կազմին հնարավորություն կտան բարելավելու դասավանդման և գնահատման մեթոդները:
- Ավելացված արժեքի ապահովման սկզբունք: Ինստիտուտի ֆինանսավորմամբ վերապատրաստված մասնագետները պարտավոր են ներքին աշխատաժողովների կամ սեմինարների կազմակերպման միջոցով տարածել իրենց ստացած գիտելիքներն ու հմտությունները իրենց գործընկերների շրջանում:
- Շարունակականություն: Վերապատրաստումների գործընթացը շարունակական բնույթ է կրում և արդյունքները նույնպես ենթակա են պարբերական մշտադիտարկման:
- Կայունություն: Վերապատրաստումների արդյունքները պետք է լինեն շոշափելի և արտահայտվեն վերապատրատվողների դասավանդման և հետազոտական աշխատանքում:

3.2 Վերապատրաստման տեսակներն են.

1) Ընդհանուր վերապատրաստում, որը կարող է վերաբերել գիտական հետազոտության մեթոդներին, գիտական կոնկրետ թեմաներին, մասնագիտական օտար լեզվի իմացության, դասավանդման նոր մեթոդների, համակարգչային հմտությունների բարելավմանը,
2) Մասնագիտական վերապատրաստում, որը կարող է վերաբերել մասնագիտական դասընթացների առավել խորը ուսումնասիրմանը, տվյալ մասնագիտության դասավանդման նորագույն և լավագույն փորձերի ուսումնասիրմանը՝ իրավիճակային խնդիրների, պրոբլեմային դասախոսությունների և սեմինարների կազմակերպման միջոցով, որոնք ունեն գործնական ուղղվածություն:

3.3 Մասնագիտական վերապատրաստման և զարգացման գործառույթի հիմնական տարրերն են՝

Յուրաքանչյուր աշխատատեղին առաջադրվող իրավասության գնահատում և նրա առջև դրվող խնդիրների գնահատումը,

- Յուրաքանչյուր դասախոսի և աշխատակցի կոմպետենտության գնահատումը,
- Վերապատրաստման պահանջարկի գնահատումը,
- Վերապատրաստման առաջարկի գնահատումը ,
- Վերապատրաստման պահանջարկի և առաջարկի վերլուծությունը,
- Վերապատրաստման տարեկան ծրագրի նախագծի կազմումը,
- Վերապատրաստման տարեկան ծրագրի հաստատումը և իրականացումը
- Վերապատրաստման արդյունքի գնահատումը,
- Ուսումնամեթոդական բազայի լրացումը,
- Դասախոսների և աշխատակիցների անհատական զարգացման բազայի լրացումը:
- Վերապատրաստման ծրագրերի հետ կապված վճարները,
- վերապատրաստման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը,
- վերապատրաստման տարեկան ծրագրի կատարողականի վերաբերյալ հաշվետվություն,
- դասախոսների և աշխատակիցների վերապատրաստման նպատակներով գործողությունների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը:
- ինստիտուտի վերապատրաստման նպատակով գործողվող դասախոսների և աշխատակիցների թեկնածությունների միջև ընտրության չափորոշիչները,
- Վերապատրաստող կազմակերպության ընտրության ձևը:

3.4 Վերապատրաստումների նկարագիրը ներառում է հետևյալ պարտադիր բաժինները.

- Վերապատրաստման նպատակը.
- Վերապատրաստման նախնական ժամկետները.
- Վերապատրաստման վերջնարդյունքները հստակ ձևակերպմամբ (գիտելիք, հմտություն, կարողություն).
- Վերապատրաստողի (թրեյներ) ընտրության չափանիշները.
- Վերապատրաստման թեմաների վերջնական ցանկը, թիրախային խմբերը և վերապատրաստումների նկարագրերը ուղարկվում են ներքին շահակից կողմերին՝ ծանոթության և առաջարկությունների համար:

3.5 Վերապատրաստումների ընթացակարգը՝

1) Մինչև ընթացիկ տարվա նոյեմբերի 01-ը յուրաքանչյուր ամբիոն մարդկային ռեսուրսների կառավարման բաժին է ներկայացնում դասալսումների հիման վրա կատարված ներքին գնահատման արդյունքները և իր առաջարկությունները ակնկալվող վերապատրաստումների թեմաների վերաբերյալ և առաջադրում է վերապատրաստվող աշխատակիցների անունները՝ նախապես ստանալով որակի ապահովման բաժնի ներկայացրած փորձագիտական գնահատումների և մշտադիտարկումների արդյունքում բացահայտված այն խնդիրները, որոնք կապված են վերապատրաստումների հետ և առաջադրում է վերապատրաստումների թեմաները և թիրախային խմբերը:
2) մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը ամփոփելով վերը նշված առաջարկությունները՝ կազմում է վերապատրաստման թեմաների ցանկը, թիրախային խմբերը և վերապատրաստումների նկարագիրը՝ վերապատրաստման յուրաքանչյուր թեմայի համար:
3) մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը խորհրդակցություն է հրավիրում թողարկող-մասնագիտական ամբիոնների՝ համաձայնեցնելու համար այն վերապատրաստումները, որոնք կարող են իրականացվել ներքին ռեսուրսներով: Հանդիպման արդյունքները ամրագրվում են արձանագրությամբ:
4) մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը վերապատրաստման թեմաների ցանկը, թիրախային խմբերը և վերապատրաստումների նկարագրերը, ինչպես նաև թողարկող-մասնագիտական ամբիոնների հետ խորհրդակցության արձանագրությունը՝ վերապատրաստումների կազմակերպման ձևի վերաբերյալ (ներքին ռեսուրսների միջոցով կամ արտաքին այլ կազմակերպությունների հանձնարարելով) ներկայացնում է ինստիտուտի ռեկտորի հաստատմանը մինչև յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 15-ը,
5) հաստատումից հետո վերապատրաստման թեմաների ցանկը, թիրախային խմբերը և վերապատրաստումների նկարագրերը ներկայացվում են շահակիցներին, և արտաքին աղբյուրների կողմից իրականացվող վերապատրաստումների համար հայտարարվում է մրցույթ՝ ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի ղեկավարմամբ: Մրցույթի համար կազմված աշխատանքի նկարագրում պարտադիր ներառվում են վերապատրաստումների հաստատված նկարագրերը: Ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորը կառավարում է

արտաքին աղբյուրներից կողմից իրականացվող վերապատրաստումների ամբողջ գործընթացը (պլանավորում, իրականացում, գնահատում):

6) Ներքին ռեսուրսներով իրականացվող վերապատրաստումների ցանկը, նկարագրերը և թիրախային խմբերի ցանկը ներկայացվում է մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետին, որը ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորի ղեկավարմամբ անմիջականորեն կազմակերպում է վերապատրաստումների ամբողջ գործընթացը (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

3. ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

4.1 Վերապատրաստումների ավարտին մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը իրականացնում է վերապատրաստման գործընթացի գնահատում՝ վերապատրաստվողների շրջանում հարցման միջոցով:

4.2 Վերապատրաստման ավարտին վերապատրաստողը ներկայացնում է հաշվետվություն, որը պարտադիր ներառում է վերապատրաստողի կողմից դասընթացի ուժեղ և թույլ կողմերի գնահատումը, դասընթացի կազմակերպման մակարդակի, ռեսուրսներով ապահովվածության գնահատումը: Հաշվետվությանը պարտադիր կցվում է նաև վերապատրաստման դասընթացի ծրագիրը:

4.3 Մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը, իրականացնում է վերապատրաստման արդյունքների գնահատումը և արդյունքների ամփոփումը ներկայացնում է ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտորին, որն էլ դրանք ներկայացնում է ռեկտորին:

4.4 Վերապատրաստումների գնահատման արդյունքները հիմք են հանդիսանում հաջորդող տարվա վերապատրաստումների կազմակերպման և բարելավման համար:

4.5 Վերապատրաստված դասախոսները պարտավորվում են իրենց ստացած գիտելիքների վերաբերյալ ներկայացնել հաշվետվություն ամբիոնի նիստում՝ պարտադիր մատնանշելով ստացած գիտելիքները և դրանց հետագա կիրառման հնարավորությունը դասավանդման և հետազոտության գործընթացներում:

4.6 Վերապատրաստման ընթացքում ստացած գիտելիքների կիրառումը վերապատրաստված դասախոսների կողմից դասավանդման և հետազոտության գործընթացում վերապատրաստմանը հաջորդող տարում ենթակա է

մշտադիտարկման ամբիոնի, մարդկային կառավարման բաժնի և/կամ որակի ապահովման բաժնի կողմից

5. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն ընթացակարգում ընդունվում է ինստիտուտի ռեկտորատի կողմից:

5.2 Ընթացակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են ինստիտուտի ռեկտորատի կողմից՝ մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի ներկայացմամբ: